2364 С.1930/1345

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

482/73
Գրադ. 1:2
БИБЛИОТЕКА
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴԵԿՐԵՏՆԵՐԸ ՍՈՑՄՐՑՄԱՆ ՅԵՎ ԱՐՏ. ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

338.983
Խ-11

ԳԱՄԽ

ԵՐԵՎԱՆ — 1929

19042-58

2364
ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ս
Ca1871
338.983
Խ-11
ԲԻԲԼԻՈԹԵԿԱ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ՎՈՍՏՈՔՈՎԵԴԵՆԻԵ
Академии Наук
СССР

ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴԵԿՐԵՏՆԵՐԸ ՍՈՑ. ՄՐՑՄԱՆ ՅԵՎ ԱՐՏ. ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԽ-Ի
ՅԵՐԵՎԱՆ 1929 Թ.

12.09.2013

32.36

ՀԱՅՊՈՒԼԻԳՐԱՖԻ ՑՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ 408
ԳՐԱՌԵՊԳԼԽՎԱՐ 2834 (բ)
ՏԻՐԱԺ 2000

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Արա ССР
Ա. ԱՄ. Ա. Մասիսյանի
ԱՆՎԱՆ

36271-66

ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՑԵՐԿՈՒ ԴԵԿՐԵՏԻ ՄԱՍԻՆ

Նպատակ ունենալով ուժեղացնել և աշխուժացնել արտադրական խորհրդակցությունների աշխատանքները ԽՍՀ Միության Ժողկոմխորհը բանվորական մասսաների քննության առնելուց հետո, այս տարի, ոգոստոսի 16-ին, ընդունեց մի վորոշում, վորի նշանակությունն իրոք վոր չափազանց կարեվոր է։

Առ այսոր մեր ձեռնարկությունները և ընդհանրապես տնտեսական մարմինները «սովորական» քաշքշուկից հետո տալիս են իրենց համաձայնությունը կյանքում կիրառելու արտադրական խորհրդակցությունների այս կամ այն վորոշումը և համաձայնության գալով միութենական մարմնի հետ սահմանում են նրանց կիրառման ժամկետները։

Սակայն չկրելով և վոչ մի պատասխանատվություն վերցրած պարտավորությունները ժամանակին և լրիվ կիրառելու համար, նրանցից շատերն իրենց վերցրած պատասխանատվության հանդեպ վարվում են չափազանց անտարբեր, վորի պատճառով և արտախորհրդակցությունների մի շարք կարեվոր առաջարկություններ չեն կիրառվում և բանվորների արտադրական ձեռներեցությանը չի խրախուսվում։

Ժողկոմխորհի մյուս վորոշումը՝ դա սոցիալիստական մրցման զարգացման և նրան ուժանպակաղ ֆոնդերի սահմանման մասին է. ավելորդ է յերկար կանգ տանել այն մասին, թե ինչո՞ւ յե անհրաժեշտ

բանվորների պարգևատրումը. հիշենք միայն, որ այդ միջոցով, խրախուսելով բանվորների ձեռներեցությունը մենք նրանց ավելի լենք մոտեցնում ձեռնարկության ապա ուրեմն ավելի ակտիվ մասնակից դարձնում սոցիալիստական տնտեսության ղեկավարման գործում։

Առ այսոր միութենական կազմակերպությունների մի շարք դիմումները, վորոշումները սոց. մրցման ֆոնդեր սահմանելու և պարգևատրումներ կատարելու մասին մնացել են անկատար։ Վորոշումների չկիրառմանը նպաստել և այն, որ մինչև այժմ ֆոնդերի առանձնացման, նրա ստեղծման և ծախսման կարգի մասին կառավարական համապատասխան վորոշում բացակայել է։

Միութենական կառավարության այդ երկու դեկրետը իրոք որ բանվորական ամենալայն խավերի ստեղծագործող ձեռներեցության և արտադրական ակտիվության զարգացման խթանն է հանդիսանում։

Մասսաների ակտիվության հարատև աճումը և նրա զարգացումը, վորոշ դեպքերում դեմ է առնում մեր տնտեսական ապարատների, հանդեպ բանվորական մասսաների ստեղծագործող ձեռներեցությունը, հաճախ գոյություն ունեցող անտարբեր վերաբերմունքը։ Միանգամայն պարզ է, որ նման պայմաններում միությունների մասսայական տնտեսական աշխատանքներում առաջացած բեկումը վտանգի չէ չենթարկվում։

Սոցիալիստական հայրենիքի զարգացման—հնգամյա պլանի վերստուգիչ թվերի կենսագործման և նրանց գերազանցման հիմնական նախապայմաններից մեկը՝ վողջ բանվոր դասակարգի ամենակտիվ մասնակցությունն է մեր երկրի տնտեսական և կուլտուրական զարգացման ամենորյա աշխատանքներին։

Խորհրդային Միության բանվոր դասակարը 1928-29 տնտեսական տարին փակեց ավելի խոշոր տնտեսական եֆֆեկտով (հետևանքներով) քան այդ նախատեսված եր վորչեվիցե տնտեսական ծրագրով. այդ արդյունքները—նվաճումները գալիս են մեզ ասելու այն «ծածկված» հնարավորությունների մասին, վորն ունի մեր պլանային տնտեսությունը և հնարավորությունների, վորը հայտնաբերել և հայտնաբերում է բանվոր դասակարգը և չքավոր ու միջակ գյուղացիությունը սոցիալիզմի շինարարության գործում։

Տնտեսական շինարարության վերաբերյալ բանվորական մասսաների առաջադրած տասնյակ հազար առաջարկությունների կիրառումն արագացնելու գործում, Ժողկոմխորհի 1929 թ. 16-ին օգոստոսի դեկրետը ունի խոշոր քաղաքական նշանակություն, քանի վոր այդ դեկրետը բանվորների նախաձեռնությունը խրախուսելով, միաժամանակ ապահովում է արդյունաբերության ռացիոնալացման և այդ ասպարեզում յեղած թերությունների վերացմանը ուղղված բանվորների բոլոր առաջարկությունների կիրառումը։

Առանձնապես կարևոր է սոցիալիստական մրցության ծավալմանը և նրա խրախուսմանը ուղղված ԽՍՀ Միության Ժողկոմխորհի 29 թ. 12-ը սեպտեմբերի վորոշումը։

Այդ վորոշումով Միութենական կառավարությունը՝ յելնելով սոցիալիստական մրցության ծավալման, արտադրական խորհրդակցությունների աշխատանքների աշխուժացման և բանվորների արտադրա-

կան ձեռներեցության խրախուսման անհրաժեշտությունից պետական ձեռնարկությունների վարչությունների վրա չե դրել մի շարք կարեվոր—կոնկրետ պարտավորություններ։

Այդ վորոշումների հիմնական մոմենտներն են սոց. մրցման նվաճումների **տնտեսական եՔՔեկոթ հաշվառումը**, մրցման ոժանդակությունը, սոցմրցման **պարգեվատրությունների** ֆոնդերի սահմանումը, ինչպես սոցմրցման նույնպես և արտխորհրդակցությունների աշխատանքներին, ակտիվ մասնակցություն ունեցող բանվորների առանձին խմբերի և ցեխերի պարգեվատրությունը և արտխորհրդակցությունների այն առաջարկությունների պարտադիր կիրառում, վորոնք ընդունված են վարչության կողմից։

Միութենական կառավարության այդ վորոշումների հետ միասին այսոր մենք ունենք Համամիութենական Կոմունիստական (Բոլշևիկների) Կուսակցության Կենտրոնական Կոմիտեի յերկու չափազանց կարեվոր վորոշումներ՝ ձեռնարկության միանձնյա ղեկավարության մասին և վորպես փորձ մի շարք ձեռնարկություններում (սահմանված և հատուկ ցուցակ) արտադրական հանձնաժողովների և խորհրդակցությունների նախագահներին արտխորհրդակցությունների վորոշումների կիրառմանը հետևելու համար գործարանի դիրեկտորի ոգնական դարձնելու մասին։ Չնայած վոր այդ փորձը սահմանված է միայն մի քանի ձեռնարկություններում, պետք է համոզված լինել, վոր այդ փորձն իրեն արդարացնելով ամենակարճ ժամանակամիջոցում կծավալվի Խորհրդային Միության բոլոր պետական ձեռնարկություններում և ընդհանրապես արտ. խորհրդակցությունների աշխա-

տանքների ուժեղացման, նրա աշխուժացման և առաջադրած առաջարկությունների անհապաղ կիրառման գործնական քայլերից մեկը կհանդիսանա։

Ներկայումս միութենական բոլոր կազմակերպությունների հիմնական և անհետաձգելի խնդիրներից մեկն է հանդիսանում բանվորական ամենալայն մասսաների սեփականությունը դարձնել, ինչպես կառավարության, նույնպես և կուսակցության Կենտրոնական Կոմիտեի հիշյալ դեկրետները և վորոշումները քանի վոր այդ կերպ միայն ապահովված կլինենք նրանց ամենահաջող կենսագործումը։

Զմոռանանք, վոր մեր աշխատանքների ձևերի, մեթոդների ու տեմպի վերակառուցման գործում հիշյալ վորոշումների անհապաղ կենսագործումը քաղաքական խոշոր նշանակություն է ստանում, վորովհետև «**միայն այն միությունն է հանդիսանում կոմունիզմի իսկական գպրոցը, վորը կարողանում է աշխատավորական ամենահեռ ընկած խավերը աստիճանաբար ներգրավել խորհրդային ժողովրդական ցնցեստության լավացման գիտակցական աշխատանքներում**» (*«Արհմիությունների դերի և խնդիրների մասին» Կոմկուսակցության 10-րդ համագումարի վորոշումներից*),

ՎՅՈՒԴՈ

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ ՎՈՐՈՇՈՒՄՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒԺԵՂԱՑՆԵԼՈՒ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՅԵՎ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԱՎԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԲԱՆՎՈՐ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՈԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Անհրաժեշտ համարելով ապահովելու արտադրական խորհրդակցությունների առաջարկների ավելի լը-

բիվ ոգտագործումը, վորոնք ուղղված են արտադրության ռացիոնալացման. և այդ առթիվ արեղում յեղած թերությունները վերացնելու համար. ամեն կերպ ուժեղացնել և բարելավել արտադրական խորհրդակցությունների աշխատանքները, ինչպես նաև բանվորների և տեխնիկական պերսոնալի ստեղծագործական ձեռներեցությունը խրախուսելու համար, ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը վորոշում է՝

1. Պարտավորեցնել պետական, տնտեսական մարմիններին ձեռք առնել կարուկ միջոցներ կիրառելու կյանքում արտադրական խորհուրդակցությունների և առանձին բանվոր ծառայողների կողմից արված այն բոլոր առաջարկները, վորոնք ընդունված են վարչության կողմից, բայց ուշացվում է նրանց իրականացումը։ Այդ առաջարկները համաձայնեցնելով Արհմիութենական կազմակերպությունների հետ, բաժանել հետևյալ կատեգորիաների՝

ա) Առաջարկություններ, վորոնք պետք է անմիջապես կիրառվեն.

բ) Առաջարկություններ. վորոնց կիրառումը պետք է նախատեսնվի արդ-ֆինանսական ծրագրով, սահմանելով նրանց կիրառման ժամկետը

2. Պարտավորեցնել պետական տնտեսական մարմիններին հետագայում ձեռնարկության ռացիոնալացման ծրագրերի մեջ մտցնել, նրանց կողմից տեխնիկապես նպատակահարմար և տնտեսապես ոգտավետ համարված արտադրական խորհրդակցությունների և առանձին բանվոր ծառայողների կողմից արված բոլոր առաջարկները։ Այս առաջարկների իրա-

գործման հետ կապված ծախքերը պետք է ծածկել ինչպես ռացիոնալացման ձեռնարկումներին հատկացված ընդհանուր միջոցների հաշվին, նույնպես և այն հատուկ գումարների հաշվին. վորը նախատեսնվում է արդ-ֆինանսական ծրագրերով։

3. Պարտավորեցնել պետական ձեռնարկությունների վարչություններին՝

ա) Հաշվի առնել արտադրական խորհրդակցությունների, ինչպես և առանձին բանվոր ծառայողների առաջարկներն ու նրանց կիրառման հետ կապված ծախքերը և այն տնտեսական եֆֆեկտը, վոր ստացվում է այդ առաջարկների կիրառումից։

բ) Տրամադրել արտադրական խորհրդակցություններին բոլոր արհրաժեշտ նյութերը (ծրագրերը, հաշվեսվությունները, ձեռնարկության կոնյունկտուրային տվյալներ և այլն)։

4. Պարտավորեցնել պետական ձեռնարկությունների վարչություններին՝

ա) Պարգևատրման յենթակա առաջարկներն ընդունելիս անմիջապես վճարել պարգևի 50 տոկոսից վոչ պակաս, իսկ մնացած մասը վճարել առաջարկն իրականացնելուց հետո։

բ) Առաջարկությունների կիրառման հետևանքով ձեռնարկության ստացած տնտեսումների գումարի 10 տոկոսի չափով հատկացնել բանվորների արտադրական-տեխնիկական լուսավորության համար նախատեսնված հատուկ միջոցներին։

5. Անձնական պատասխանատվություն դնել ձեռնարկության դիրեկտորի վրա արտադրական խորհրդակցությունների ու առանձին բանվորների ծառայողների կողմից արված առաջարկությունները իր

ժամանակին քննության առնելու ինչպես և ընդունված առաջարկությունները կյանքում կիրառելու համար։

6. Ձեռնարկությունների տեխնիկական խորհրդակցությունների կազմի մեջ պետք է մտնեն արտադրական խորհրդակցությունների կողմից առաջադրված և գործարկում տեղկոմների կողմից հաստատված, անհրաժեշտ տեխնիկական ընդունակություններ և արտադրական փորձառություն ունեցող բանվորները։

7. Հանձնարարել ԽՍՀՄ-ի ԺՏԳԽ-ի պետական տեխնիկական հրատարակչությանը, միութենական հանրապետությունների պետական հրատարակչությունների հետ միասին կազմակերպել բանվորների համար մատչելի տեխնիկական գրականության հրատարակությունը։

8. Հանձնարարել ԽՍՀՄ-ի Բանգյուղտեսչության Ժողկոմխորհատին, ԺՏԳԽ-ի, ճանապարհների հաղորդակցության Ժողկոմխորհատի և Համամիութենական Արհեստակցական Միությունների կենտրոնական խորհրդի հետ միասին հրատարակել հրահանգ ներկա վորոշումը կիրառելու մասին։

Այդ հրահանգում մասնավորապես պետք է նախատեսվեն.

ա) Արտադրական խորհրդակցությունների և առանձին բանվորների ու ծառայողների կողմից արված բոլոր տեխնիկական նպատակահարմար և տնտեսապես ոգտավետ առաջարկների քննության և կիրառման կարգը.

բ) Ցեխային վարչությունների իրավունքների լայնացումը, վորը կապահովի ցեխային արտադրական խորհրդակցությունների կողմից արված առաջարկների ժամանակին կիրառումը.

գ) Այդ գումարների ծախսման կարգը, վորոնք դրվում են գործարանային և ցեխային վարչությունների տրամադրության տակ առաջարկների իրականացման համար.

դ) Բանվորներին տեխնիկական ոգնություն կազմակերպելու կարգը.

յ) Առաջարկների կիրառման հետևանքով ստացված տնտեսումների հաշվեառման կանոնները.

զ) Բանվորների արտադրական տեխնիկական լուսավորության համար հատկացված միջոցների ծախսման կարգը (հոդված 4-րդ բ. կետ)։

9. Հանձնարարել ԽՍՀՄ-ի Բանգյուղտեսչության Ժողկոմխորհատին սահմանել սիստեմատիկ հսկողություն սույն վորոշումը կյանքում կիրառելու համար։

16 ոգոստոսի 1929 թ. Մոսկվա, Կրեմլ

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄՐՑՄԱՆ ՖՈՆԴԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ.

Տնտեսական շինարարության հնգամյա ծրագիրը խորհրդային սոցիալիստական հանրապետությունների միության տնտեսական և կուլտուրական հետամնացության վերացման, յերկրի ինդուստրացման և սոցիալիզմի կառուցման գործում կարևոր խնդիր է հանդիսանում։

Այդ խոշոր խնդրի կենսագործումը հնարավոր է միայն բանվոր ռասակարգի մասսայական ձեռնարկության ծավալումն և տնտեսական վերակառուցման գործին բանվորների ամենալայն մասսաների և աշխատավոր գյուղացիության ներգրավման միջոցով։

Ժողովրդական տնտեսության զարգացման և սոցիալիստական ռեկոնստրուկցիայի հնգամյա ծրագրի

կիրառումը, պահանջում է մասսաների ստեղծագործական ձեռներեցության բազմակողմանի ծավալում և նրանց կողմից աշխատանքի կազմակերպման ու նրա արտադրողականության բարձրացման գործում իրենց ազդեցությունն ունենալու համար, աշխատանքների նոր ձևերի մշակումը։

Սոցիալիստական մրցությունը զարթնեցնելով բանվորական մասսաների ստեղծագործական յեռանդը և ձեռներեցությունը պետք է պրոլետարական մասսաները սոցիալիստական շինարարության գործին ել ավելի ներգրավելու մշտական մեթոդ և Խորհրդային Միության ժողովրդական տնտեսության վերակառուցման հիմնական գծի և հնգամյակի կենսագործման համար տարվելիք պայքարի կարեվոր զենք հանդիսանա,

Ընթացիք տարում արդեն սոցիալիստական մրցությունն ընդգրկելով մասսաներին զգալիորեն նպաստել է ինքնարժեքի իջեցման. աշխատանքի արտադրողության բարձրացման և արտադրանքի պատրաստման չափի վերաբերյալ կառավարության ծրագրային հանձնարարությունների կենսագործմանը։ 1929-30 տնտեսական նոր տարվա շինարարության համար կառավարության նախատեսած ծրագիրը պահանջում է նոր վերելք ԽՍՀ Միության բանվորներին գլխավին ընդգրկելու սոցիալիստական մրցման մասնակցողների թվում, վճռականորեն պայքարելու ընդեմ շռայլության, անտնտեսավարության, հանուն աշխատանքի և արտադրության պրոցեսների կազմակերպչական և տեխնիկական գործի բարելավման ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը նշելով առանձին արտադրական շինարարական և փոխադրական ձեռնարկությունների բանվորնե-

ի խմբերի սոց մրցման ընթացքում հայտնաբերած հեսոսական ջանքերն, անհրաժեշտ է համարում, վոր ամենամեծ աշխատանքային վերելք հայտնաբերած և կառավարության պլանային հանձնարարությունների կիրառման ամենալավ ցուցանիշներ տվող ձեռնարկությունների բանվորական խմբերը և առանձին բանվորները ստանան ամենալայն խրախուսանք։ Այդ նպատակով ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը վորոշում է՝

1. Արտադրական, շինարարական և փոխադրական ամբողջ ձեռնարկությունների և նրանց ցեխերի արհեստանոցների և բաժանմունքների աշխատողները, ինչպես նաև հերթերը, բրիգադների առանձին բանվորները և նրանց խմբերը սոցիալիստական մրցման կարգով արտադրության մեջ ունեցած նվաճումների համար պարգևատրվում են այս վորոշման ներքոհիշյալ հոդվածների հիման վրա։

2. Ամբողջ ձեռնարկությունների, առանձին ցեխերի, արհեստանոցների, բաժանմունքների և հերթերի աշխատակիցների պարգևատրումը կատարվում է համապատասխան ձեռնարկությունների, ցեխերի արհեստանոցների և բաժինների համար սահմանված արտադրական ծրագրերը (աշխատանքի արտադրողականության բարձրացման, արտադրանքի ավելացման, նրանց վորակի լավացման, արտադրանքի ինքնարժեքի իջեցման, բրակի պակասեցման և վառելիքի, հում նյութի և այլ նյութեղենի խնայողության, փոխադրությունների մեծացումը և նրանց ինքնարժեքի իջեցումը և այլն) սոց. մրցման կարգով գերազանցելու համար, այն պայմանով յեթե առանձին գործարանների արտադրական հանձնարարություններն

բսա տրված ֆակտորի դերազանցումը չի կատարվում մյուս գործարանների արտադրական հանձնարարությունների ֆակտորները չկատարելու հետ։

Առանձին դեպքերում յերբ ձեռնարկության, ցեխի, արհեստանոցի, բաժանմունքի կամ հերթի արտադրական հանձնարարության կիրառումը, արտադրության հատուկ պայմանների պատճառով կապված է ուժերի բացառիկ լարման հետ, այդ դեպքում թույլատրվում է դարձյալ պարգևատրել արտադրական հանձնարարությունները կատարելու համար։

Բրիգադների, խմբերի և առանձին բանվորների պարգևատրումը կատարվում է ռացիոնալիստական առաջարկությունների և արտադրության կազմակերպման գոյություն ունեցող պայմաններում աշխատանքի արտադրողականության բարձրացման, գործիքների արտադրանքի ավելացման, նրանց վորակի լավացման, արտադրանքի ինքնարժեքի իջեցման, բրակի պակսեցման, վառելիքի, հում նյութի և այլ նյութեղենի ծախսումների գործում և այլն ունեցած նվաճումների համար։

3. Վորպես պարգևատրման աղբյուրներ, սոցիալիստական մրցման ոժանդակող ֆոնդեր են կազմվում՝

ա) Արտադրական, տրանսպորտի և շինարարական առանձին ձեռնարկություններին կից։

բ) Տրեստների և ձեռնարկությունների այլ միավորներին կից։

գ) Իրենց իրավասության ներքո տրեստի և ձեռնարկությունների այլ միավորներ ունեցող ԽՍՀ Միության և միութենական հանրապետությունների ժողովրդական Կոմիսարիատներին կից։

4. Սոցիալիստական մրցման ֆոնդերը կազմվում են տվյալ տնտեսական տարում ձեռնարկությունից անմիջականորեն սոցիալիստական մրցում անցկացնելու հետևանքով տարվա ընթացքում ստացած տնտեսումներից 40 տոկոսի չափով հատկացումներ անելով։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Մինչև սոցիալիստական մրցման աշակցման ֆոնդերի ստեղծումն, համաձայն սույն հոդվածի, ձեռնարկությունները համաձայնություն դալով համապատասխան արհեստակցական կազմակերպությունների հետ, այդ ֆոնդերի ստեղծման համար ավանսային հատկացումներ են անում նրանց աշխատավարձի ֆոնդի մեկ չորրորդ կամ մեկ յերկրորդի տոկոսի չափով։

5. Սոցիալիստական մրցման ոժանդակող ֆոնդերը ծախսվում են՝

ա) Պարգևատրումներ տալու համար։

բ) Սոցիալիստական մրցման անցկացման հետ կապված արտադրական պրոպագանդայի կարիքների և սոց. մրցման այլ ծախսերի համար։

Սոցիալիստական մրցմանն ոժանդակող ֆոնդերի ծախսումը կատարվում է համապատասխան ձեռնարկի ղեկավար մարնի կարգադրությամբ, արհեստակցական կազմակերպությունների համապատասխան մարմինների հետ համաձայնեցնելուց հետո։

6. Պարգևատրումները կատարվում են վորպես միանվագ հատկացումներ համապատասխան ձեռնարկության, ցեխի արհեստանոցի, բաժանմունքների, հերթի, բրիգադայի խմբերի, աշխատողների կոլեկտիվների, ինչպես նաև առանձին աշխատողներին կուլտուր-կենցաղային կարիքները հոգալու համար։

Առանձին բանվորները նույնպես կարող են պարգևատրվել դրամական ձևով։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Գործող մյուս վորոշումների հիման վրա աշխատակցի պարգևատրումը-բացիոնալիզատորական առաջարկությունների գյուտարարության և այլ անհատական նվաճումների համար, խոչնդոտ չի հանդիսանում այս վորոշման հիման վրա կուլտ-կենցաղային բարիքներ տրամադրելու կարգով տրվյալ աշխատակցին պարգևատրելը։

7. Պարգևատրումների նշանակումը վորպես կանոն կատարվում է նախընթաց տնտեսական տարվա տնտեսական արդյունքները պարզելուց հետո, բայց վոչ ուշ, քան մի ամիս առանձին ձեռնարկությունների համար և 2 ամիս տրեստների և ձեռնարկությունների այլ միավորների համար։

Բացառիկ դեպքերում, յեթե տնտեսական տարվա առաջին կիսամյակն ավարտելուց հետո արտադրական հանձնարարությունները գերազանցելու անվիճելի և խոշոր նվաճումներ են պարզվել այդ դեպքում վերադաս տնտեսական մարմնի թույլատվությամբ և համապատասխան պրոֆեսիոնալ կազմակերպության մարմնի հետ համաձայնեցնելուց հետո թույլատրվում է կատարել մինչ ժամկետյա պարգևատրություն։

8. Սույն վորոշումը գործադրելու մասին հրահանգը հրատարակվում է մեկ ամսվա ընթացքում ԽՍՀ Միության Ժող. Տնտեսությունների և Ճանապարհների ու Հաղորդակցության Ժողովրդական Կոմիսարիատի կողմից ըստ պատկանելության այդպիսին Համամիութենական Արհեստակցական Միությունների Կենտրոնական Խորհրդի հետ համաձայնեցնելուց հետո։

Հրահանգում մասնավորապես վորոշվում է՝

ա) Սոցիալիստական մրցման ժամանակ ֆոնդերի ստեղծման և գանազան ֆոնդերի միջև հատկացումների բաժանման կարգը։

բ) Պարգևատրման առանձին ֆակտորների տեխնիկական և տնտեսական ցուցանիշների հաշվառման կարգը։

գ) Սոցիալիստական մրցման կարգով ունեցած նվաճումների հաշվառման կարգը։

9. Սույն վորոշումը գործադրվում է սոցիալիստական մրցման կարգով ձեռք բերած բարելավումների պարգևատրման համար սկսած 1928-29 տնտեսական տարվանից։

10. Հանձնարարվում է ԽՍՀ Միության Աշխատանքի Ժողովրդական Կոմիսարիատին մեկ ամսվա ընթացքում համապատասխան մարմինների և հաստատությունների հետ համաձայնեցնելուց հետո այս վորոշումներին համեմատ մշակել և մտցնել ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդի հաստատության, առևտրի և գյուղական տնտեսության աշխատողներին սոցիալիստական մրցման կարգով ունեցած նվաճումների պարգևատրման վորոշումների նախագիծը։

ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահ՝ (Ա. Ի. ՌԻԿՈՎ)

ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի և Աշխատանքի ու Պաշտ. Խորհրդի Գործերի կառավարչի տեղակալ՝ (Ի. ՄԻՐՈՇՆԻԿՈՎ)

Մոսկվա, Կրեմլ, 11 սեպտեմբերի 1929 թ.

36271-66
БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ГСС. Библиотека ZUUՌ-Арм.ССР Ա. ԱՄ. Ա. Մասիսյան

ՀՐԱՀԱՆԳ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ ԴԵԿՐԵՏԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Արտադրական խորհրդակցությունների վորոշումները ընդունելու և կենսագործելու կարգը։

2. Արտադրական խորհրդակցությունների առաջարկություններն ընդունելու հետևյալ կարգն է սահմանվում,

ա) Ցեխային արտադրական խորհրդակցության առաջարկությունները ցեխի վարիչի լեզրակացությամբ, ընդունելու որվանից սկսած 5 որվա ընթացքում քննվում և ցեխային արտադրական հանձնաժողովի և ցեխային ադմինիստրացիայի կողմից, վորտեղ և առանձնացվում են բոլոր այն առաջարկությունները, վորոնք պետք և կիրառվեն ցեխում, մյուս առաջարկությունները ցեխադմինիստրացիայի լեզրակացության հետ միասին ուղարկվում և համագործակցանային արդատրական հանձնաժողովին։

բ) Համագործակցանային արտադրական հանձնաժողովի և գործարանի վարչության ներկայացուցիչները մեկ շաբաթվա ընթացքում սահմանում են ցեխերից ստացած առաջարկությունների կիրառման ժամկետները։

գ) Համագործակցանային արտադրական հանձնաժողովը պարտավոր է վոչ ավել քան լերեք որվա ընթացքում ադմինիստրացիայի լեզրակացությամբ հանձնել արտադրական խորհրդակցություններից ու առանձին բանվորներից և ծառայողներից ստացած բոլոր առաջարկությունները։ Ադմինիստրացիան պարտավոր է վոչ ավել քան 7 որվա ժամկետում տալ առաջարկություններն ընդունելի լինելու մասին, վերջնական

վորոշում, ստացած առաջարկություններն, անմիջապես հանձնել կենսագործելու։

Գործարանի կյանքին չվերաբերվող առաջարկությունները պետք է կենսագործվեն տրեստի համաձայնության դեպքում.

դ) Համագործակցանային (կամ համապատասխան ցեխային) արտադրական հանձնաժողովը 3 որվա ընթացքում հայտնում է հեղինակին նրա առաջարկի կիրառման համար ձեռնարկած միջոցների մասին։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Արտադրական խորհրդակցության առաջարկությունների վերաբերյալ ադմինիստրացիայի տված լեզրակացության մեջ պետք է ցույց տրվեն՝ ա) ընդունված առաջարկությունների մասին՝ առաջարկության կիրառումից սպասվելիք տնտեսումների ժամկետը, առաջարկի կենսագործման կարգը բ) չընդունված առաջարկությունների մասին՝ չը ընդունելու (մերժված է) լրիվ կամ մասնակի, մերժման պատճառները։

2. Այն դեպքում, յեթե արտադրական հանձնաժողովի և ադմինիստրացիայի միջև առաջարկի գնահատման շուրջն առաջանում է կոնֆլիկտ այդ խնդրի լուծումը փոխադրվում է համապատասխան տնտեսական և միութենական վերադաս մարմինները-տրեստ, և միության նահանդային կոմիտե (կենտվարչություն)։ Դիրեկտորը և ձեռնարկության գործարկոմը պարտավոր են 3 որվա ընթացքում տրեստի և նահանդային կոմիտեի քննության հանձնել բոլոր այն առաջարկությունները, վորոնց շուրջը համաձայնություն չի կայացել։

3. Բոլոր առաջարկությունները բաժանվում են 3 խմբի՝

ա) Ցեխի վարիչի անմիջական կարգադրությամբ կիրառվող առաջարկությունները կենսագործվում են կյանքում մեկ շաբաթվա ընթացքում։ Ցեխի վարիչն իրավունք ունի բոլոր դեպքերում կենսագործել յուրաքանչյուր առաջարկություն առանց ձեռնարկության դիրեկտորի թույլտվության, եթե տվյալ առաջարկի կենսագործման համար պահանջվում է վոչ ավել քան 300 ռուբլի։

բ) Գործարանի վարչության կողմից կիրառվող առաջարկությունները, վորոնց կենսագործման ժամկետը չպետք է գերազանցի 3 ամսից։

Ձեռնարկության դիրեկտորն արտֆինպլանով նախատեսված գումարների սահմանում իրավունք ունի կենսագործել բոլոր առաջարկությունները, իրավունք ունի կենսագործել նույնպես և այն առաջարկությունները, վորոնց կիրառումից մեկ տարվա ընթացքում ստացած տնտեսումները ծածկում են կիրառման հետ կապված ծախսերը։

գ) Այն առաջարկությունները, վորոնք պետք է կիրառվեն տրեստի համաձայնությունից հետո, այդպիսիների կենսագործման համար սահմանվում է վոչ ավել քան 6 ամիս

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Բացառություն են կազմում տեխնիկական մեծ մշակումներ կամ ծախսեր պահանջող, (վորը պետք է նախատեսվի Արդֆինպլանում) առաջարկությունները։ Չկիրառված առաջարկությունների ցուցակը, նպատակ ունենալով իրացնել այդպիսիները, յուրաքանչյուր կես տարի պարտադիր կարգով համաձայնեցվում են համապատասխան միության հետ։

4. Ցնտեռական տարվա սկզբին ձեռնարկության դիրեկտորը և տրեստի նախագահը պարտավոր են յուրաքանչյուր ձեռնարկության ստուգիչ թվերում և արֆինպլանում նախատեսնել արտադրական խորհրդակցությունների և առանձին աշխատողների առաջարկությունները կենսագործելու հատուկ միջոցներ։

5. Այդ միջոցները կազմվում են՝ ա) բացիոնալիզատորական ձեռնարկումների համար բաց թողնված միջոցներից բ) առաջարկությունների կենսագործման հատուկ միջոցներից, այն դեպքերում եթե այդպիսինը նախատեսված է ստուգիչ թվերով և արդֆինպլաններում գ) ցեխի և ձեռնարկության փոքր հարմարությունների և վերանորոգման համար նախատեսված շահագործման միջոցներից և դ) Արդեն իսկ առաջարկությունների կիրառման հետևանքով առաջացած տնտեսման միջոցներից։

6. Բանվորների չկիրառված հին առաջարկությունների կենսագործման համար բոլոր ձեռնարկությունները պարտավոր են անմիջապես կազմել հանձնաժողով, արտադրական հանձնաժողովների, ադմինիստրացիայի և ճարտարապետ տեխնիկական սեկցիայի ներկայացուցիչների անդամակցությամբ, այդ հանձնաժողովները պետք է վերանայեն տվյալ առաջարկությունները և սահմանեն նրանց կիրառման ժամկետներ, այնպես վորպեսզի այդպիսիները կենսագործվեն 29-30 թվի 1-ին կիսամյակում։

Հանձնաժողովի աշխատանքի ժամկետը սահմանել մեկ ամիս։

7. Առաջարկությունների կիրառման ամենորյա հսկողությունը կատարում են ցեխային և համագոր-

ծարանային արտադրական հանձնաժողովները, վորի համար բանվորական ակտիվի ուղնությամբ պարբերաբար ինչպես արտադրական հանձնաժողովի և վերադաս արհեստակցական կազմակերպության նույնպես և ԲԳՏ տեղական մարմինների կողմից կատարվում է արտադրական խորհրդակցությունների առաջարկությունների կիրառման ստուգում։

8. Պրոֆկազմակերպությունները Բանգյուղտեսչության մարմինների հետ միասին պարտավոր են բանվորների առաջարկությունների կիրառման քաջքշուկների համար, մեղավորներին ենթարկել պատասխանատվության վորպես արտադրական խորհրդակցությունների մասին Ժողոմխորհի դեկրետ խախտողների։

2. ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

9. Արտադրական խորհրդակցությունների առաջարկությունների հաշվառումը վարում է գործարանի վարչությունը։ Համեմատաբար խոշոր ձեռնարկություններում գործարանի վարչությունն առանձնացնում է հատուկ վորակյալ աշխատող, վորի պարտավորությունների մեջ է մտնում բացի առաջարկությունների հաշվառումից, կատարել արտադրական խորհրդակցությունների վորոշումների դասավորում (систематизация) առաջարկությունների կիրառման հսկողությունը և արտադրական հանձնաժողովների հետ կապ պահպանելը։

10. Ձեռնարկության ռացիոնալացման ծրագրերի և հերթական արդիականացումների մեջ մացրած առաջարկությունների կիրառումը պետք է հաշվի առնել առանձին։

11. Առաջարկությունների քարտերը պետք է բաշխել ըստ ցեխերի և ստացած ամիսների, պետք է առանձնացնել կիրառվածները չկիրառվածներից և լուծման ընթացքի մեջ գտնվողները ժամկետանցներից։

12. Գործարանի վարչությունը պետք է հաշվի առնի կյանքում կիրառած բանվորների առաջարկություններից ստացվող տնտեսումները դրամական հաշվով և նրանցից արտադրական ու տեխնիկական էֆեկտը։

3. ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ

13. Ադմինիստրացիայի կողմից ընդունված և ձեռնարկությանը տնտեսական էֆեկտը բերող բանվորների բոլոր առաջարկությունները պարգևատրվում են. նույնպես պարգևատրվում են բանվորների աշխատանքները թեթևացնող (բարելավող) առաջարկությունները։ Պարգևատրումը կատարվում է անկախ այն հանգամանքից թե հեղինակը հարուցում է պարգևատրման խնդիր թե վոչ։

14. ԽՍՀ Միության ժողտնտգերխորհի սեպտեմբերի 13-ին № 967 և հաղորդակցության ճանապարհների ժողովրդական կոմիսարիատի 1928 թ. 2-ին նոյեմբերի № 632 հրահանգներով սահմանած բանվորական գյուտարարության պարգևատրման կարգը և չափը տարածվում է նաև արտադրական խորհրդակցությունների և բանվորների ու ծառայողների առաջարկությունների վրա։ Պարտավորեցնել ադմինիստրացիային տվյալ առաջարկությունները փակցնել աչքի ընկնող տեղում։

4. ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ ՏՐՎԵԼԻՔ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՅԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

15. Բանվորներին օգնելու համար, ադմինիստրացիան գործարկոմի և ճարտարապետ տեխնիքական սեկցիաների բյուրոների հետ միատեղ կազմակերպում է արտադրական անկյուններ, ցուցահանդեսներ և տեխնիքական խորհուրդներ տալու գործը։

Կոնսուլտացիաները (խորհուրդները) կազմակերպում են՝

ա) Բանվորին անհատական օգնություն ցույց տալ իր առաջադրած առաջարկության կոնկրետացման, նրա նախագծի և գծագրությունների մշակման համար։

բ) Կոնկուրսների կազմակերպումը վաղորոք մշակած և արտադրության զարգացման գործում կարևոր դեր խաղացող թեմաների շուրջը։

գ) Տեխնիքական պրոպագանդայի կազմակերպումը, ստեղծելով համապատասխան խմբակներ, կազմակերպել դասախոսություններ և զրույցներ մեր և արտասահմանյան տեխնիկայի նվաճումների մասին։

16. Արտադրական հանձնաժողովները ադմինիստրացիայի հետ միատեղ ձեռնարկությունների միջև վաղորոք մշակած ծրագրով, կազմակերպում են աշխատանքների փորձի փոխանակում, վորի համար գործադրում են՝

ա) շրջագայելով բանվորներին հետաքրքրող ձեռնարկությունները։

բ) Նվաճումների ստուգատես, կանչեր (ВЫЗОВ)

գ) Ունեցած նվաճումների մասին տեղեկությունների կանոնավոր փոխանակումը ձեռնարկությունների միջև։

17. Ցեխային և համագործարանային ադմինիստրացիան պարտավոր է մասնակցել ցեխային և համագործարանային արտադրական հանձնաժողովներում և խորհրդակցություններում առաջարկությունների քննության ժամանակ և տալ իրեն կարծիքը տվյալ առաջարկի նպատակահարմարության և այդպիսին գործարանում կիրառելու հնարավորության մասին։

18. Տնտեսական տարվա սկզբից գործարկոմի հետ համաձայնեցնելուց հետո ադմինիստրացիան արդիֆինպլաններում պետք է նախատեսի բանվորների տեխնիքական օգնության ձեռնարկումների կենսագործման հետ կապված բոլոր ծախքերը։

5. ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 10 %-ԻՆ ՖՈՆԴԻ ԾԱԽՍՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

19. Ձեռնարկություններում ֆոնդերը կազմվում են 29 թ. հոկտեմբերի 1-ից 1928-29 տնտեսական տարում կիրառած առաջարկություններից ստացած տնտեսումներից 10%-ին հատկացումների միջոցով։ Հետագայում հատկացումները կատարվում են տնտեսական տարվա յուրաքանչյուր կվարտալից (յեռամսյակ) հետո։

20. Ֆոնդերը ծախսվում են բանվորների արտադրական կրթության մասսայական կարիքների վրա՝ տեխնիքական խմբակների, արտադրական եքսկուրսիաների, լեկցիաների կազմակերպման, տեխնիքական գրականության մատակարարման և այլն։

21. Ֆոնդը գտնվում և գործարանի վարչության տրամադրության տակ և ծախսվում է գործարկոմի հետ համաձայնեցնելուց հետո։

6. ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ ՎՈՐՈՇՄԱՆ ԿԵՆՍԱԳՈՐԾՄԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

22. Գործարկումը ձեռնարկություններում պարբերաբար ստուգում է արտադրական խորհրդակցության մասին հրատարակած վորոշման կիրառումն։ Կիրառման ստուգումը պարզելու համար ստեղծվում են բանվորական խմբակներ։ Խոշոր ձեռնարկություններում վորպես փորձ, արտադրական խորհրդակցություններին վերաբերվող դեկրետի կիրառման համար կարող են ստեղծվել ժամանակավոր վերահսկիչ հանձնաժողովներ։

23. Դեկրետի կիրառման ընթացքի մասին բանվորներից կազմակերպել հատուկ բանվորական կոնֆերենցիաներ։

24. Պատի լրագրերը պետք է պարբերաբար լուսաբանեն, դեկրետի կիրառման հսկողության դրությունը, բանվորների հետ կազմակերպեն զրույցներ և լուսաբանեն այդ պատի լրագրերում։

25. Խոշոր ձեռնարկություններում արտադրական խորհրդակցությունների դեկրետի կիրառման հարցերի շուրջը հրատարակել հատուկ թերթիկներ։

26. Կուլտ հանձնաժողովները, պետք է ձեռնարկեն բոլոր հնարավոր միջոցները մոբիլիզացիայի լենթարկելով այդ նպատակի համար ակումբային աշխատանքների բոլոր մեթոդները։

27. Բանգյուղատնտեսության մարմինները, պրոֆկազմակերպությունների հետ միատեղ պարբերաբար պետք է կատարեն Ժողկոմխորհի վորոշման մասսայական ստուգումն։

28. Տվյալ հրահանգը տարածվում է՝ արտադրական խորհրդակցությունների, առանձին բանվորների և ծառայողների, ժամանակավոր վերահսկիչ հանձնաժողովների և արտադրական կոնֆերենցիաների, ինչպես նաև սոցիալիստական մրցման կարգով արած բոլոր առաջարկությունների վրա։

29. Տվյալ հրահանգը միութենական, հանրապետական և տեղական արդյունաբերության բոլոր տընտեսական մարմինների կողմից համապատասխան արհեստակցական կազմակերպությունների մասնակցությամբ և բանվորական լայն հասարակայնության հսկողության ներքո լենթակա լե կյանքում անմիջապես կիրառելու։

ՃԱՐՏԱՐԱՊԵՏ-ՏԵԽՆԻՔԱԿԱՆ ՍԵԿՑԻԱՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ ԴԵԿՐԵՏԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ (ՀԱՄԿԽ-Ի 29 Թ. 18 9-№ 223 ՀՐԱՀԱՆԳԸ)

Ժողկոմխորհի դեկրետով ձեռնարկությունների դիրեկտորների վրա անձնական պատասխանատվություն է դրված արտադրական խորհրդակցությունների առաջարկությունները ժամանակին քննելու, ինչպես՝ և ընդունված առաջարկությունները կյանքում կիրառելու համար։

Դեկրետով նախատեսված է ժամկետներ ընդունված առաջարկությունների համար տրվելիք պարգևի համար, վորով և ուժեղացվելու լե բանվորների շահագրգռվածությունը արտադրական խորհրդակցությունների աշխատանքներում։ Սակայն դեկրետի մասին բանվորներին վոչ բավական տեղյակ պահելը

խոչնդոտ է հանդիսանում նրանց արտադրական խորհրդակցության աշխատանքներին մասնակցելու և ներգրավելու գործին։

Ճարտարապետ-տեխնիկական աշխատողների տեղական կոլեկտիվները պետք է աշխատանքներ տանեն բանվորական մասսաներին ժողկոմխորհի դեկրետին ծանոթացնելու համար և արտադրական խորհրդակցությունների նշանակության խոշորացման հետ, կապված վերանայեն նաև ճարտարապետ-տեխնիկական աշխատողների մասնակցության ձևերն այդ աշխատանքներում։

1. Մասնակցություն ընդունել միութենական ֆերմինների աշխատանքներում չկիրառված առաջարկությունների քննության և ոգնել նրանց այդպիսիների կենսագործման։

ա) Առանձնացնել այն առաջարկությունները, վորոնց կիրառումը չի պահանջում խոշոր ծախսեր և ձեռնարկության ֆինանսական ծրագրերի դրության համեմատ կարող է անմիջապես իրականացվել։

բ) Այն առաջարկությունները, վորոնք պետք է նախատեսվեն արդ ֆինպլանում այդպիսիները կյանքում կիրառելու համար սահմանել ձեռնարկության համար ձեռնտու և կայուն ժամկետներ։

2. Ճարտարապետ-տեխնիկական աշխատողների կոլեկտիվների կողմից ձեռնարկության ծրագրերի քննության ժամանակ անհրաժեշտ է ստուգել իրո՞ք ձեռնարկության կողմից նախատեսվել և բանվորներից ու ծառայողներից ընդունած առաջարկությունների իրականացում թե վոչ։

3. Արտադրական հանձնաժողովների և խորհրդակցությունների աշխատանքներում անմիջական մասնակցություն ընդունելով, ճարտարապետ-տեխնիկական աշխատողները ձեռնարկությունների հաշվետվությունները քննելիս պետք է ոգնեն նրանց իրենց գիտելիքներով, միութենական մարմինների միջոցով պետք է պահանջեն, վորպեսզի տնտեսական մարմինները կենսագործեն առաջարկությունները, նրանց կենսագործման, ինչպես նաև այդ առաջարկությունների կիրառման հետևանքով ստացած տնտեսումների հաշվառումը։

4. Ճարտարապետ-տեխնիկական աշխատողներն ոգնելով բանվորներին նրանց առաջարկությունները տեխնիկապես ձևակերպելու գործին միաժամանակ, պետք է ոգնեն և զարգացնեն նրանց մեջ առաջացած տեխնիկական մտքերը և բանվորների առաջարկները ընդունելու և կենսագործելու գործում ոժանդակեն արտադրական հարձնաժողովներին։

5. Կազմակերպել ձեռնարկության արտադրական խորհրդակցությունների կազմի մեջ աշխատելու համար առաջադրած բանվորներին ոգնելու գործը, նպատակ ունենալով վերջիններին յուրացնել տալ տեխնիկական գիտությունները պահանջող հարցերը։

6. Ցերևան հանել ճարտարապետ-տեխնիկական սեկցիաների կողմից կազմակերպված բանվոր գյուտարարների տեխնիկական կոնսուլտացիայի (խորհուրդների) աշխատանքների արդյունքները և ստուգել գյուտարարներին տեխնիկական հարցերի մշակման, գծագրություններ կազմելու և անհրաժեշտ հաշիվներ վարելու համար ցույց տված ոգնությունը։ Այն ձեռնարկություններում, վորտեղ կոնսուլտացիաներ առայժմ չի կազմակերպվել անհրաժեշտ է անմիջապես կազմակերպել։

Ճարտարապետ-տեխնիկական աշխատողները պետք է իրենց վրա վերցնեն բանվոր գյուտարարների շեֆությունը, ինչպես նաև հավասար չափով յուրաքանչյուր ճարտարապետ-տեխնիկական աշխատող պետք է վերցնի թեպետ և մեկ բանվոր գյուտարարի շեֆությունը, այն հաշվով, վոիպկեսզի նրա գյուտը հասցնի մինչ տեխնիկապես ձեվակերպելը և իրականացնելը։

7. Ժողկոմխորհի դեկրետում նախատեսված և առաջարկությունների կիրառման հետևանքով ստացած տնտեսումներից կատարել 10% ելին հատկացումներ բանվորների արտադրական տեխնիկական դրության հատուկ Ֆոնդին։ Այդ գծով ստացած միջոցները հնարավորություն կտան բանվորների արտադրական տեխնիկական գիտության մակարդակն անհրաժեշտ բարձրության վրա դնել։

Ճարտարապետ-տեխնիկական աշխատողները մասսաների արտադրական-տեխնիկական կրթության գործի ձեռներեցությունը պետք է վերցնեն իրենց վրա, վորի հետ միատեղ անհրաժեշտ է՝

ա) Պարզել ձեռնարկությունների արտադրական խմբակների նկատմամբ ճարտարապետ-տեխնիկական աշխատողների ղեկավարության արդյունքները և սժանդակել «տեխնիկան մասսաների» ընկերության աշխատանքներին ձեռնարկություններում։

բ) Բանվորական մասսաներին մատչելի և մասսայական տեխնիկական գրականության պակասը՝ նրա ուշ տպագրության ինչպես նաև հեղինակների ձգձգման պատճառներով առայժմ չի վերացված. տվյալ գրականության պատրաստումն և նրա հրատարակությունն արագացնելու համար անհրաժեշտ է կազմակերպել ճարտարապետ-տեխնիկական աշխատողների խմբակներ։

ԽՍՀՄ-ի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԴԵԿՐԵՏԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՐԱՀԱՆԳԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՍՈՑՄՐՑՄԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Մշակված է ՀԱՄԿԽ-ի Տարիք.-Տնտեսական բաժնի կողմից)

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՈՒՆ

1. Ձեռնարկությունների, ցեխերի, բաժինների, հերթերի, բրիգադների և առանձին բանվորների միջև սոցիալիստական մրցման գործին ոժանդակելու համար, արտադրական տրանսպորտի և շինարարական ձեռնարկությունների, տրեստների և յերկաթգծի վարչությունների և ձեռնարկությունների այլ միավորներին կից Ժողովրդական Տնտեսության Խորհրդի և ԽՍՀ Միության Ժողտնտգերխորհի Գլխավոր Վարչություններին կից սահմանվում և սոցիալիստական մրցման ոժանդակող ֆոնդեր։

2. Ֆոնդեր սահմանելու պատասխանատվությունն ընկնում է ձեռնարկությունների կառավարիչների և համապատասխան վերադաս տնտեսական մարմինների վրա ըստ պատկանելույն։

3. Սոցիալիստական մրցման ոժանդակող ֆոնդերը գտնվում են ձեռնարկությունների կառավարիչների և վերադաս տնտեսական-մարմինների ղեկավարության ներքո և ծախսվում են համապատասխան պրոֆմիությունական կազմակերպությունների հետ համաձայնեցնելուց հետո։

4. Սոցիալիստական մրցման հաջող ծավալմանն ոժանդակելու համար ձեռնարկություններում՝

ա) Տրեստների, սինդիկատների Վարչությունները պարտավոր են՝

1. Իրենց յենթակա տնտեսական մարմինների ֆոնդերի սահմանման և ծախսման աշխատանքների նկատմամբ կազմակերպել անհրաժեշտ ղեկավարություն, տալ հարկավոր հրահանգներ, կատարել անհրաժեշտ հաշվեառում և ունենալ հսկողություն։

2. Ժամանակին մուծել իրենց յենթակա տնտեսական մարմիններից սոցմրցման հարցերին վերաբերող ստացված բոլոր հարցումները։

3. Աջակցել մրցման պայմանագրերի կնքման գործին, ինչպես նաև մասնակցություն ընդունել այդ աշխատանքներում և վերցնել համապատասխան պարտավորություններ։

4. Հետևել թե վորչափ ե՞ ձեռնարկությունը պատրաստ մրցման հետեվանքով առաջացող արտադրության աճումն ընդգրկելու, ապահովելով նրա մատակարարումը հումքով, նյութեղենով, գործիքներով, պատվերներով և այլն։

5. Ժամանակին վերացնել մրցման ծավալումը դժվարեցնող, ձեռնարկության կազմակերպման, ղեկավարման և նրա աշխատանքներում նկատված թերությունները։

6. Մասնակցություն ընդունել համապատասխան պրոֆկազմակերպությունների մրցման աշխատանքներում։

բ) Ձեռնարկության կառավարիչը (դիրեկտորը) պարտավոր ե՝

1. Կազմակերպել հարկավոր ղեկավարություն, տալ հրահանգներ, հաշվի առնել և հսկողություն սահմանել գործարանի Վարչության ու ցեխային ադմինիստրացիայի մրցման ոժանդակելու գործում կատարած աշխատանքներին։

2. Հետեվել թե վորչափ են պատրաստ մրցման հետեվանքով առաջացած փոփոխումները ցեխերի, հերթերի, մեքենաների, բրիգադների և այլն արտադրական ծրագրերի մեջ մտցնելու ժամանակին վերացնելով մատակարարման, աշխատանքների կազմակերպման, պատվերներով ապահովվելու և այլ թերությունները։

3. Մասնակցություն ընդունել արտադրական հանձնաժողովների, արտադրական խորհրդակցությունների և գործարկոմների պլենումների, ձեռնարկության, ցեխի, բրիգադայի մրցման ցուցանիշների մշակման և քննության գործում։

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄՐՑՄԱՆ ՈԺԱՆԴԱԿՈՂ ՖՈՆԴԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

5. Ձեռնարկությունում ֆոնդը սահմանվում ե՝

ա) Նոր տնտեսական տարվա սկզբից վոչ ուշ քան մի ամիս անց արդֆինպլանով սահմանված տարեկան աշխատավարձից հետևյալ չափի հատկացումներ կատարելով՝ 1). Մինչ հազար բանվորներ ունեցող ձեռնարկություններում՝ աշխատավարձի $^1/_2$%-ը, 2). Հազարից ավել բանվորներ ունեցող ձեռնարկություններում՝ աշխատավարձի $^1/_4$%-ը։

բ) Անցած տարի սոց. մրցման հետևանքով գոյացած տնտեսումներից տնտեսական տարին ավարտելուց վոչ ուշ քան մի ամիս անց 40% հատկացնելով։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. —1-ին հատկացումը, 1928/29 տնտ. տարվա համար կատարվում և վոչ ուշ, քան 1929 թ. նոյեմբերի մեկը։

գ) Այլ մուծումներից։

6. Տրեստների, սինդիկատների վարչությունները և ձեռնարկությունների այլ միավորների կից ֆոնդերը սահմանվում են՝

ա) Մրցման մեջ մտած ձեռնարկությունների մրցման ֆոնդերից 25%-ի չափով հատկացում կատարելով։

բ) Այլ մուծումներից։

7. Ֆոնդին մուծվող գումարները բաշխվում են հետևյալ կերպ՝

ա) Ձեռնարկությունների ֆոնդերից 25% հատկացվում է տրեստի ֆոնդին։

բ) Տրեստների, սինդիկատների և ձեռնարկությունների այլ միավորների ֆոնդից, Ժողովրդական Տնտեսության Խորհրդի, ԽՍՀ Միության Ժողտնտգերխորհրդի և Ճանապարհների ու Հաղորդակցության ֆոնդերի ըստ պատկանելության հատկացվում են 10%։

8. Ֆոնդերի միջոցները պահվում են տնտեսական մարմինների հատուկ ընթացիք հաշիվներում և կարող են ծախսվել միայն իր անմիջական նպատակներին, բյուջետային տարվա վերջում չծախսված միջոցները փոխանցվում են գալիք տարվա նույն հողվածին։

ՄՐՑՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՇՎԵԱՌՈՒՄԸ ՅԵՎ ՏՆՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՉԱՓԻ ՎՈՐՈՇՄԱՆ ԿԱՐԳԸ

9. Ձեռնարկության, ցեխերի, արհեստանոցների բաժանմունքների, հերթերի և բրիգադների և այլն աշխատանքի ցուցանիշների հաշվեառումը, ցուցանիշների շարժումը, ինչպես նաև մրցման մեջ մտած բոլոր ձեռնարկությունների մրցման ցուցանիշների հաշվեառումը կատարվում է հետևյալ կերպ՝

ա) Գործարանի Վարչությունը վերադաս տնտեսական մարմինների ցուցմունքների հիման վրա

համաձայնեցնելով այդ գործարկումների հետ, կազմակերպում է ցուցանիշների հաշվեառումը ըստ ցուցակի և առանձնացնում այն անձնավորություններ, որոնք պատասխանատու չեն ըստ ցեխերի մրցման ցուցանիշները ժամանակին հաշվի առնելու համար։

բ) Մրցման մեջ մտած ցեխերի, բրիգադների, բանվորների խմբերի և առարձին բանվորների աշխատանքների մրցման ցուցանիշների հաշվեառումը սահմանվում է ցեխային ադմինիստրացիայի կողմից, այդպիսիները ցեխային արհբյուրոյի և ցեխային արտադրական հանձնաժողովի հետ համաձայնեցնելուց հետո։

գ) Ցուցանիշների թվի մեջ պետք է մտցրվեն ձեռնարկությունների, ցեխերի, բրիգադների միջև կնքած տնտեսա-քաղաքական պայմանագրերում մատնանշված, ինչպես նաև առանձին բանվորների մրցման օբյեկտների բոլոր ցուցանիշները։

10. Ճանապարհների և Հաղորդակցության Ժողովրդական Կոմիսարիատը ԽՍՀՄ Ժողտնտգերխորհի Գլխավոր Վարչությունները, տրեստները և սինդիկատները մրցման աշխատանքների հաշվառման կարգով պարտավոր են՝

ա) Համաձայնեցնելով այդ համապատասխան պրոֆկազմակերպության հետ կազմել արդյունաբերության համապատասխան ճյուղի աշխատանքների գալիք տարվա հիմնական ցուցանիշների ցուցակը, ցուցանիշների ցուցակի մեջ պետք է մտցրվի, ինչպես ցուցանիշների հիմնական հարցերը, նույնպես և ցուցանիշների առանձին ելեմենտները, որոնց կիրառումը կապված է ցուցանիշներն ամբողջովին կիրառելու խնդրի հետ։

բ) Ցուցմունքներ տալ ձեռնարկությունների հաշվառման և հաշվետվության սիստեմի փոփոխման մասին, վորոնք հեշտացնում են մրցման ցուցանիշների լրիվ հաշվառման հնարավորությունները։

գ) Համապատասխան տնտեսական մարմինների գործունեության մասին հաշվետվությունների մեջ հատուկ գլուխներ մտցնել, ինչպես ձեռնարկության, նույնպես և ամբողջ տնտեսական մարմնի բանվորների ու ծառայողների մրցման արդյունքների մասին։

11. Սոցիալիստական մրցման անցկացման հետ կապված ստացած տնտեսումների չափի վորոշման կարգով ձեռնարկությունների և վերադաս տնտեսական մարմինների կառավարիչները (դիրեկտորները) պարտավոր են՝

ա) Սահմանել մրցման մեջ ներգրավված ամբողջ ձեռնարկության ցեխերի և բանվորների խմբերի մրցման հետևանքով ունեցած տնտեսումների կվարտալային հաշվառում։

բ) Տնտեսումների հաշվառման կարգը սահմանել ձեռնարկությունների ցույց տված բաժինների և բանվորների խմբերի բոլոր հիմնական ցուցանիշներով։

գ) Առանձին ցեխերի, ձեռնարկությունների նվաճումները սահմանելու, ինչպես և ժամկետից շուտ պարգևատրումներ կատարելու հնարավորությունը պարզելու նպատակով մինչ տնտեսական տարվա փակվելը սահմանվում են նախնական հաշիվների (տվյալների) հիման վրա։

12. Ձեռնարկության աշխատանքների բացառիկ լարվածության և արտադրության հատուկ պայմաններից լեցնելով թույլատրվում է կատարել պարգևատրումներ նաև արտադրական ծրագրերի կիրառման համար, պարգևատրումներ կատարելու նման դեպքերը պետք է սահմանվեն վերադաս տնտեսական մարմինների կողմից՝ համաձայնության գալով այդ խնդրի առթիվ համապատասխան պրոֆկազմակերպության հետ։

ՖՈՆԴԵՐԻ ԾԱԽՍՈՒՄԸ

13. Ձեռնարկության սոցիալիստական մրցման աջակցող ֆոնդը ծախսվում է՝

ա) Մանկական մսուրների, հրապարակների, պարտեզների, ֆիզկուլտ հրապարակների կառուցման վրա և այլն։

բ) Ակումբների և կարմիր անկյունների կահավորման և բանվորական գրադարանների լայնացման վրա։

գ) Բանվորների և արտադրական խորհրդակցությունների ակտիվի վորակի բարձրացման դասընթացքների կազմակերպման վրա և այլն։

դ) ԽՍՀ Միության և արտասահմանի գործարանները բանվորների էքսկուրսիաներ և գործուղումներ կազմակերպելու, բանվորներին հանգստյան տներ և սանատորիաներ ուղարկելու համար և այլն։

ե) Առանձին բանվորներին, բրիգադներին, հերթերին և ցեխերին պարգևներ տալու, գրադարանների, գործիքների հավաքի, էքսկուրսիաների կազմակերպումով և այլն։

14. Տվյալ ծախքերը կատարվում են անցյալ տնտեսական տարվա ընթացքում մրցման հետևանքով իրենց աշխատանքներում բարձր ցուցանիշների հասած ցեխերին, բաժանմունքներին, հերթերին, բրիգադներին և առանձին բանվորներին պարգևատրելու համար։

15. Թույլատրվում է պրեմիաներ տալ իրենց արտադրական ծրագրերը գերազանցած առանձին ցեխերին, անկախ այն հանգամանքից, թե ձեռնարկության արտադրական ծրագիրը ամբողջովին կիրառվել է թե վո՞չ։ Ցեխի, առանձին հերթերի, բրիգադաների և առանձին բանվորների պարգևատրումը կատարվում է նույն կարգով։

16. Պարգևատրումներ կատարելը և ֆոնդի բաշխման կարգը սահմանում է ձեռնարկության դիրեկտորը գործարկոմի հետ միասին՝ տնտեսական տարին փակվելուց վոչ ուշ, քան յերկու ամիս անց։ Ֆոնդի բաշխման ծրագիրը տնտեսա-քաղաքական պլանագրի կիրառման աստիճանի մասին Ժամանակավոր Վերահսկիչ Հանձնաժողովի զեկուցման հետ միասին վաղորոք քննվում է համագործարանային արտադրական խորհրդակցությունում (կոնֆերենցիայում)։

17։ Սինդիկատների, տրեստների և վերադաս տնտեսական մարմինների ֆոնդերը ծախսվում են սոց. մրցման հետևանքով իրենց աշխատանքներում ավելի բարձր ցուցանիշների հասած ձեռնարկությունները և հիմնարկությունները պարգևատրելու համար։ Պրեմիայի ձևը և նրա կազմը սահմանվում է համապատասխան տվյալ հրահանգի 13-րդ հոդվածի։

18. Սոցիալիստական մրցման աջակցող ֆոնդերից, բացի պարգևատրումներից կատարվում է նաև հետևյալ ծախքերը՝

ա) Այլ ձեռնարկությունների գյուղացիության և հիմնարկությունների հետ տնտեսա-քաղաքական պլանագրի կնքման հետ կապված գործարկոմի ծախսերը հոգալու համար։

բ) Մրցման ընթացքում հատուկ թերթիկների և պլակատների հրատարակման, ինչպես և բանվորական լայն մասսաները սոցիալիստական մրցման ներգրավելու գործին ոժանդակող կազմակերպչական և կուլտուր-կրթական այլ ձեռնարկումների վրա։

19. Ֆոնդի ծախսման նախահաշիվը յուրաքանչյուր բյուջետային յերեք ամսվա համար պարտադիր կերպով տնտեսավարների կողմից համաձայնեցվում է համապատասխան պրոֆկազմակերպությունների հետ։

20, Իրենց աշխատանքներում ավելի բարձր ցուցանիշների հասած աչքի ընկնող ձեռնարկությունների ընտրության նպատակով, տրեստներին, ճանապարհների վարչություններին և ԽՍՀ Միության Ժողտնտգերխորհի Գլխավոր Վարչություններին կից կարող է կազմվել ժամանակավոր Վերահսկիչ Հանձնաժողովներ հետևյալ կազմով՝

ա) Տրեստի Վարչության նախագահի, կամ Գլխավոր վարչության կառավարիչի.

բ) Տրեստի յերկու ներկայացուցիչների.

գ) Տրեստի ձեռնարկությունների յերկու դիրեկտորների.

դ) Համապատասխան պրոֆկազմակերպության յերկու ներկայացուցիչների.

յե) Ցեվ համապատասխան տնտեսական մարմնի յերկու խոշոր ձեռնարկությունների գործարկոմների ներկայացուցիչների։

21. Հանձնաժողովի պարտականությունների մեջ է մտնում՝

ա) Ուսումնասիրել ձեռնարկության աշխատանքների վերաբերվող նյութերը և ծանոթանալ տնտեսա-

քաղաքական պայմանագրերի ստուգման մասին ժամանակավոր վերահսկիչ հանձնաժողովների լեզրափակումների հետ։

բ) Սահմանել պրեմիաների քանակը, նրա աշխատանքը և այս կամ այն նպատակին ծախսելու կարգը։

գ) Պարգևատրման յենթակա ձեռնարկությունների ընտրությունը.

դ) Պրեմիաների ժամանակին բաշխումը և պարգևատրած ձեռնարկություններին հանձնումը։

ՖՈՆԴԻ ԾԱԽՍՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

22. Սոցիալիստական մրցման ոժանդակող ֆոնդի կազմակերպումը ձեռնարկություններում հայտարարվում է հրամանով։

23։ Ֆոնդի ծախսման հաշվետվությունը կատարվում է տնտեսական մարմնի կողմից և վերջինիս միջոցներով։

24. Ֆոնդի ծախսման և լրացման մասին տնտեսական մարմինը, մամուլի, ընդհանուր ժողովների, արտադրական խորհրդակցությունների և կոնֆերենցիաների միջոցով պարբերաբար հաղորդում է բանվորներին և ծառայողներին։

25. Սոցիալիստական մրցման ոժանդակող ֆոնդերի հաշվեառումը կատարվում է ԽՍՀ Միության Ժողքոմտգերխորհի Կենտրոնական Վիճակագրական և ՀԱՄԿՄ-ի աշխատանքի Վիճակագրության Կենտրոնական Բյուրոյի կողմից սահմանված հատուկ հրահանգի հիման վրա։

ՀՍՍՌ-Արա ՍՍՊ

«Ազգային գրադարան»

32. 356

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТ
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

С 4/218

ԳԻՆԸ 10 ԿՈՊ.